Սահմանադրության փոփոխությունների նախագիծը չի կարող դրվել հանրաքվեի

ՀՀ Ազգային Ժողովը 2015թ. հոկտեմբերի 5-ի որոշմամբ ընդունեց "ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշումը:

«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» ենթակետի համաձայն. «Հանրաքվեի չեն կարող դրվել՝

գ) մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին ու պարտականություններին, դրանց իրականացումն ապահովող սահմանադրական երաշխիքների վերացմանը կամ սահմանափակմանը վերաբերող, ինչպես նաև Սահմանադրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բացառիկ իրավասությանն ուղղակիորեն վերապահված հարցերը»:

Սահմանադրության փոփոխությունների նախագիծը, գործող ՀՀ Սահմանադրության համեմատ, պարունակում է մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները սահմանափակող դրույթներ, ինչպես նաև ՀՀ գործող նախագահի լիազորությունների ժամկետի փոփոխություն:

ՀՀ Ազգային Ժողովի որոշմամբ հավանության արժանացած Սահմանադրության փոփոխությունների նախագծում առկա են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հետևյալ սահմանափակումները.

1. ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն. «Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:»

Սահմանադրության փոփոխությունների նախագծով մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման վերաբերյալ հոդվածը 76-ի համաձայն. «Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա

պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:»

Գործող Սահմանադրության սույն դրույթի առանցքային հասկացություններից է հանդիսանում «ժողովրդավարական հասարակությունում» արտահայտությունը: Նախագծում իրավունքների սահմանափակումները սահմանող հոդվածներում բացակայում է «ժողովրդավարական հասարակությունում» անհրաժեշտության պայմանը, այսինքն իրավունքների սահմանափակումը կարող է ունենալ կամայական բնույթ և չպայմանավորվել ժողովրդավարական հասարակությունում դրա անհրաժեշտությամբ:

2. Գործող ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածի համաձայն. «....Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք: Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից:....»

Սահմանադրության փոփոխությունների նախագծի 35-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք ունեն: Ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով: 2. Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս կինը և տղամարդը ունեն հավասար իրավունքներ: 3. Ամուսնանալու ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ առողջության և բարոյականության պաշտպանության նպատակով»:

Այսինքն, Սահմանադրական փոփոխություններով նախատեսվում է, որ ամուսնության ազատությունը կարող է սահմանափակվել օրենքով և որպես սահմանափակման հիմք կարող է հանդիսանալ առողջության և բարոյականության պաշտպանության նպատակը: Նմանատիպ որևէ սահմանափակում առկա չէ գործող Սահմանադրությունում:

3. **Սահմանադրության փոփոխություններով ներմուծված է նոր 3-րդ գլուխ. «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները»: Այս գլխով սահմանված երաշխիքները անորոշ են, քանի որ հոդվածներում այս իրավունքները չեն ճանաչվում որպես սահմանադրական նորմ, այլ նախատեսվում է նրանց սահմանումը օրենքով կամ օրենքին համապատասխան, որը կարող է կրել կամայական բնույթ և դժվար կլինի գնահատել դրանց համապատասխանությունը Սահմանադրական նորմերին՝ վերջիններիս բացակայության պայմաններում:**

4. Գործող ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք

ունի աշխատանքի ընտրության ազատություն:Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:….»

Սահմանադրության փոփոխությունների նախագծի 82-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք»:

Այսինքն, Սահմանադրական փոփոխություններով այլևս չի ճանաչվում աշխատանքի իրավունքը որպես սահմանադրական նորմ, քանի որ այն պետք է սահմանվի օրենքով:

5. Գործող ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն. «...Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով»:

Սահմանադրության փոփոխությունների նախագծի 85-րդ հոդվածի համաձայն. «1. Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք: 2. Օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը»:

Այսինքն, Սահմանադրական փոփոխություններով այլևս չի ճանաչվում անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու սահմանադրական իրավունքը, այլ այն պետք է սահմանվի օրենքով, որը կարող է կրել կամայական ձևակերպում՝ սահմանափակելով այդ իրավունքի իրականացումը:

6. Գործող ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն. ՀՀ Սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:»

Սահմանադրության փոփոխությունների նախագծի 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն ՀՀ Սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:»

Այսինքն Սահմանադրական փոփոխություններով սահմանափակվում է տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության նպատակով ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը:

Այսպիսով Սահմանադրական փոփոխությունների նախագիծը, որը ՀՀ Ազգային Ժողովի որոշմամբ ստացել է հանրաքվեի դրվելու հավանություն, պարունակում է մարդու և քաղաքացու որոշ իրավունքների, ազատությունների սահմանափակում և նրանց իրականացումն ապահովող սահմանադրական երաշխիքների վերացում և ըստ այդմ համաձայն «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» ենթակետի չի կարող դրվել հանրաքվեի:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Վանաձոր

07.10.2015 թ.

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am